գրչութեան թուականն է՝ 1265—1272։ Մեր ենթադրութիւնը հաստատելու համար առաջ կբերենք մի շարք բառեր, քերականական տարբերութիւններ, որ յատուկ են այդ և աւելի ուշ դարերի և միայն այդ դարերի հեղինակների մօտ են գործածական, ինչպէս են. «համայնիւ», «մակաւասար», «համաքատակիւր» «ծիծ», «յերկնամիջակ», «սրտապինդ», «բարեաւ մնալ ասացեալ», «խիզան», «հարիփ», «չաուշ», «ներշրջակաւ» և էն. այս բառերը գտնում ենք Գրիգոր Մագիստրոսի, Նչեցու, Երզնկացու, Սկեւռացու մօտ։ Ժամանակն ապացուցանող մի ուրիշ, և այն էլ շատ կարևոր փաստն է հնչիւնական ուղղագրութեան հետևողութիւնը, որ այդ դարերում մըտաւ. բառերի միջում և վերջում չհնչուող «յ»-երը չեն գրուել», իսկ երբ «ու» պարզ «ւ»-ի ձայն ունէր, գրուել է «ը». օր. վան որո, ի ներքո, երեսնամեա, տեսս, սեղանս, գիտելս, ծառաի, աւդաինքն, արքաին, մնաին, հաերէն և էն. տրուաւ, նրուաճէին, լրացեալ, նրուազ, խրուէր, թրուէր, քրքրուէին, Դինրուէացիքն, անսրուաղ, պատրսի և էն, թէև պէտք ասած աւելի շատ անգամ պահուած է սովորական հին ուղղագրութիւնը։

Այսպէս ուրեմն ճառի գրուելու ժամանակն ստացուում է տասներկուերորդ դարը։ կամ տասներեքի սկիզբը։ Կարապետ եպիսկոպոսը ցոյց է

ա. Համ. Գալուստ Տեր Մկրտչեան Ցիշատակ. Գորիսա եւ Շամնի. յառաջ. էջ 34 «Հին բնտիր ձեռ. շատերն են ինձ յայտնի այսպէս որոշ եւ կանոնաւոր ուղղագրութեամբ։ Նոյն ուղղագրութիւնը պահպանուած է հնագոյն արձանագրութեանց մէջ շատ կամ սակաւ միօրինակութեամբ։»